



Տարեկան զինեւ և 7 սուրի (խոտի ծախսով): Ստորագրաբար ցի բաժանորդները սկսին զինեն այս հասցեով. Եւ Դաւիթ, Եւ Քե-
ժակչոյ Արմանոյ Դաշտի „Միտա“:

Յիֆիկա՛ն կարելի և ստորագրովիլ խմբադրոստն մէջ (ՍՐԺՐՈՒ-
ՆՈՒ ՍՈՆ) և ըստնով ընթերցարանով:

පාඨය

Մասնատուր խալտարարութիւն ապելէ քաղաղը պիտի լինարէ 10
Հաւարակ տատի Համար 1 կողելէ արծաթէ Զալտարարութիւննը
տպլիւմնն Հայերէն, Ռուսերէն, Ղրաշերէն, Ֆրանսիարէն, Գերմա-
ներէն եւ թուրքերէն:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՂ Է մեղաւորս. — Ներքին տեսու-
թիւնէ: Փոխարեմք Լրեւորին ընկերութիւն: Նա-
մակ իւրացի: Նամակ Կարապետից: Ներքին լու-
րեր: — Արտ. տեսչին տեսուի իւն: Մշակման
վիճակ: Նամակ Թէյմուրի, Արապիկ լուրեր:
Վերամանկի ուսումնարաններ: — Խառն լու-
րեր: — Եւր. պատարագ: — Տիրած: — Առևտրա-
կան: — Թաղապարտութիւններ:

I

Երբ Հային առաջարկում էք մի Հայոց լրագրին ստորագրվելու, — նա մեծ մասամբ բացասական պատասխան է տալիս ձեզ:

Երբ նորան առաջարկում էք իր երեխային
մի Հայոց ուսումնարան ուղարկելու,—նա մեր-
ժուժէ՛ ձեր առաջարկութիւնը:

Միթէ Հայը կտրուէ ինձ մի բան սո-
վորեցնել, ասում ենք մենք...

Ուրիշից ես կարող եմ սովորել, մտաւորապէս շահվել, բայց Հայից երբէք...:

Ինչևէ դերա է հիմնվում այդ անասկ կարծիքը: Հայի այդ անհատատարմութիւնը դէպի Հայոց գիտութիւնը, դէպի Հայի մտաւոր զարգացումը ունի՝ արդեւ յարգելի պատճառներ...:

Գլեհեք մի հայեացք մեր մօտիկ անցեալի
մերա:

Երբ դարեւոր անշարժութենից յետոյ, մենք պատահեցինք դրսի տարրերի շարժմանը, պատահեցինք եւրոպական կեանքին, եւրոպական լուսաւորութեանը,—մեր առաջ բաց-վեցան երկու ճանապարհ: Մինը ներկայաց-նում էր մեզ ամեն միջոցները պարզ եւրո-պական կրթութիւն ընդունելով, բացար-ձակ թողնել մեր անցեալը մեր աւանդու-թիւնները,—միւսը ցոյց էր տալիս մեզ հը-նարները, պահելով մեր անհատական յատ-կութիւնները, մեր ազգային լիզու եւ ոգի,— յարմարեցնել մեզ յատուկ առանձնութիւն-ները եւրոպական կրթութեան պահանջնե-րին...»

Մենք կարող էինք մեր լեզվե վերա նայել որպէս միջոցի վերա, ենթարկել նորան բազմաթիւ փոփոխութիւններին, կերպարանափոխել մեր ազգային կեանքը, — և ճառագեցնել ընդ հանուր եւրօպական մտքերը հայրենի յատկանիշ առանձնութիւններին:

Բայց մենք այդ չ'արեցինք, — որովհետև
պատրաստված չէինք:

Փոխանակ աշխատելու հայերէն լեզուով
Թարգմանել եւրոպական, այսինքն ընդհանուր
մարդկային մտքերը, փոխանակ յարմարեցնելու
մեր առանձնութիւններին եւրոպական կրթութեան
արդիւնը,—մէնք յամառութեամբ շարունակեցինք
հայի հետ մեռած զրաբառով խօսել Թէ
եկեղեցու, Թգրականութեան մէջ :

Փոխանակ հրաժարվել հին դասական լեզուներին յատուկ, բարձր մոլթ, խրթի ձևերից և ճառական ոճերից և մտցնել պարզ

խօսակցու թեան թէև անտաշ ոճերը, — մենք
շարունակեցինք ժողովուրդի համար անհաս-
կանայի կեդուով գրել, որբապղծութիւն հա-
մարելով փոփոխութիւններ անելու դարերով
օրինացրա՞ծ ձևերի մէջ :

Մեր ուսումնարանում մենք չ'սեպհակա-
նացրինք մեզ դասաւուժեան եւրոպական
մեթօդը, այլ շարունակեցինք հին, անհամ-
եղանակով դաս տալ,—որովհետեւ չ'կարո-
ղացանք աշեստել ըմբռնել ժամանակի պա-
հանջմունքը, չ'կարողացանք հետեւել եւրո-
պական մտքի առաջադիմութեանը:

Մեր լրագիրներում և օրագիրներում մենք շարունակեցինք ճառական, մուժ, անհասկանալի գրվածները նախադասել պարզ դատողութիւններին ժողովրդի առօրեա պահանջների վերայ: Մենք չէինք հետևում այնքան մտքին, որքան ձևին,—որովհետև մենք մեր մտքերի պակասութիւնը պէտք է ծածկէինք լեզուի ձևերի հարստութեամբ: Զհարողանալով դործնական, ժողովրդի համար օգտաւէտ բաներ գրել, մենք ստիպված էինք այնքան մուժ կերպով գրել, որ կարծեն թէ չափազանց խելօք բան ենք գրում:

Ինքներս գրելու նիւթ չունենալով, մենք ստիպված էինք մեր լրագրիւնքի էջերը և օրագրիւնքի երկսնեքը կամ անհասկանալի թարգմանութիւններով լցնել, կամ դառաւ ներքի առաջին պատահած անհամ նամակներով, որ չ'վերաւորենք այս ինչ, կամ այն ինչ քաղաքում նշանակութիւն ունեցող Արարկոսեանի կամ Մարտիրոսեանի անձնական զգացմունքը, հորա ինքնասիրտ թիւնք,— կամ անշնորհ կրիտիկ և պօզէմիկ էինք բացանում միմեանց դէմ:

Այդ գրիտիւրը և սօղեմիւրը միմեանց մէջ
հայ օրագրիւնները հասցրին մին, և հայհոյանքը
և անձնականութիւնը, գրողներից մինը մե-
ղադրութիւնը միւսին թէ նա քաջ է, միւսը
թէ նա մեծ էր թ ունի... և այլն:

Հասարակութիւնը, զգլեց, և կարծու՛մ է որ մի օրագրի կրիտիկը միևսի դէմ, անպատճառ հայ հոյեանք և անձնականութիւն պիտոյնի...սոյն ինչ Եւրօպայի մէջ փոխադարձ կրիտիկը միշտ ընդունված է, և մեծ օգուտ է բերում հասարակական մտքերը պարզելու համար:

† Մենք զզվեցինք ուսումնարանից որովհետև
մեր ուսող մնարանները անշարժ էին

Մենք զգլեցինք դասառուութենից, որով
հետեւեալ որ աւելաւ մահ կապարէն երբ փ
խանակ կարգաւու, զարդանալու, նոր մետոքն
ըին հետեւելու և նոցա սեպհականացնելու,
անցնում էին թէ դասամիջոցները, թէ ամբող
գիշերները թուզթ, խաղալու և միմեան
զէմ բամբասելու մէջ, իսկ առարկաները ա
ւանդում էին ըստ կարողութեան, այ
սինքն ինչպէս նոցա ասանդում էին 50 տալ
սորանից առաջ:

Մենք զզկեցինք օրագրութենից, որովհետև մեր օրագրողներ չ'ձանաչելով ժողովրդի պահանջները, մտաւորապէս պատրաստ չ'լինելով հանդէս դուրս գալ, չ'կարողանալով իրանց մտքերը յայտնել, ինքնուրոյն մտաւոր արգիւնքը ծնել, լընուժէին լերերի էջերը ամեն ստոյացած անհամ նամակներով, դամբանական ճառերով, անկտր հուրդ բանասանդօս իշններով ...:

Մենք զգվեցինք զրոպանական կրիտիկայից
սյուժեի կից, մարերի մէջ մրցութենից,— ու
րովհետեւ մեր կրիտիկն երբեք մեր քըն-
նադատութիւնն երբ բովանդակվում էին
քանի մի անհամ զրովանքից, լեհ հայհո-
յանքներով և անձնական յարձակմունքնե-
րով ...:

Մենք զգլեցինք առհասարակ ուսումնա-
րանից, դասառոււ թիւնից, օրագրու թիւնից,
գրականական քննադատու թիւնից, որոնք լու-
սուորեալ երկիրների մէջ կրթութեան ամե-
նայնչանաւոր դորժիչները կն... ..որովհետեւ
մեր ուսումնարանը, մեր դպսատունը
թիւնը, մեր օրագրութիւնը և գր-
ականական քննադատութիւնը, մեր
սեպհական տնընդունակութեան, անշարժու-
թեան և տգիտութեան պատճառով չ'կա-
րողացան ըմբռնել իրանց հասարակական նը-
շանակութիւնը և իրանց անգործնական, ան-
համ, անյարմար ուղղութեամբ հասարա-
կական բարձր նշանակութիւն ունեցող գոր-
ծիչների անունը կոտորեցին.....

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԷԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Քանի մի ամիս սորանից առաջ Թիֆլիսում շատ էր խօսվում Բոխադարձ կրեդիտի ընկերության հիմնելու մասին, մարդիկ հաւաքվում էին այդ ընկերության կազմակերպութեան մասին վեճաբանելու համար, „KAB KABE“ լրագիրը տպւում էր այդ մասին յօդվածների միշտբայ, վրաց „Դրօսեա“ լրագրում նոյն առարկայի մասին տպվեցաւ մի յօդված, մէկ նոյն ժամանակ „փոխադարձ կրեդիտութեան“ անունով մի հայերէն բոբշեր հրատարակվում էր։ Այդ յօդվածներից մի քանիսները պաշտպանում էին մանր կրեդիտը միւսները, օրինակ Բ. Է. տառերով ստորագրված յօդվածը հաւատացնում էր, որ փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը միշտ հիմնվում է միայն աւստրական դասի դործունէութիւնը նպաստելու համար, և ոչ թէ ուրիշ արդիւնաւոր դասերի։ Նա հերքում էր քաղաքի բոլոր արդիւնաւոր դասերի այն հիմնարկութեան մէջ մասնակցութեան կարելութիւնը։

Նայելք զորճնական աչքով խնդրի վերա
Մեր խնդիրը փոքր 'ի շատէ պարզելու հա
մար, մեզ հարկաւոր կ'լինի դիմել ամենա
տարրական հասկացողութիւններին:

Մենք ամեն արդիւնաբերութիւնը բաժա-
նում ենք երկու տեսակ. մեծ արդիւնա-
բերութեան և փոքր արդիւնաբե-
րութեան: Ամեն արդիւնաբերութիւն մեզ
պահանջվում է զինուորապէս երկու գործիչ,
դրամագույն (կապիտալ) և աշխատանք:

Մեծ արդիւնաբերութիւնը այն է, որտեղ համեմատաբար աւելի դրամագլուխ է պահանջվում (օրինակ մի գործարան, Յաբրիկա) քան արդիւնաբերութիւնը այն ենք առում, որտեղ համեմատաբար աւելի անձնակաւն աշխատանքն է պահանջվում (օրինակ գերձկիկ, արվեստագործ, արհեստագէտի գործունէութիւնը, և այլն);

Եթէ փոքր արդիւնաբերութիւնը համեմատաբար փոքր գումարի հարկաւորութիւն ունի և աւելի օգնութիւն է խնդրում անձնական աշխատանքից,—այդ չէ նշանակում թէ փոքր արդիւնաբերութիւնը երբէք փող գումարի հարկաւորութիւն չգնի:

Վեցրուք, թէ այն գումարը հարկաւոր է
 փոքր արդիւնազէտին իր պարուստի միջոցը
 ճարեիւ համար, երբ նորա անձնական ար-
 խատանքը պակասում է,—այն ժամանակ, նա
 ստիպված է լինում դիմել հարուստներին
 նոցանից մի գումար փոխ ուզելու համար
 Գումարատէրը, տեսնելով թէ փոքր ար-
 դիւնազէտը հարկաւորութիւն ունի փողի,—
 պահանջում է բարձր տոկոսներ... 30, 40, 50
 և աւելի հարիւրի վերա: Մեծ գումարա-
 տէրերը չեն հասկանում, որ այդպիսի մեծ
 տոկոսները պահանջելով փոքր կարողութեան
 արդիւնաբեր ժողովուրդից, նոքա իրանք պատ-
 ճառ են դառնում այդ զաւի արդիւններով
 թանգանալուն,— ուրեմն իրանք իրանց կ
 ֆեստում, ստիպված լինելով աւելի թանկ
 վճարել ամեն արդիւնքի համար:

Այդպէս փոքր արդիւնադէտները, կամ մի որ և է գործ սկսողները մեծ մասամբ իրանց կարողութեանը և սկսած գործի ընդարձակութեանը նույնիմի չափազանց մեծ տոկոսներ են վճարում, այն մանր զուճար, ների համար, որոնք հարկաւոր են նոցա ձեռնարկութիւններին:

Բարձր տեխնոսներ վճարելով, փոքր արդիւնաբերական պիտի աշխատէ այնքան թանգ ծախելու, որ իրան հետ դարձնէ վճարած տոկոսները: Իսկ թանգութիւնը ամէնքին ըզգալն է, ուրեմն ոչ թէ միայն ինդը դասին այլ և դրամատէրերին անպամ: Բայց արվեստաւորին կամ փոքր արդիւնաբերական միջանակէ կարող ածողիւ թանգ ծախել. եթէ նորա արդիւնաբերածի պէս ուրախներ բազմութիւն քաղաքում,—նա այն ժամանակ չէ կարող իր ցանկացածի չափ թանգ ծախել . այլ շատ անգամ սոխոված է, չ'նայելով վճարած բարձր տոկոսներին, իր արդիւնաբերածը կ'օգտախոսուի և ուրեմն քնատ կրելու:

Այնպս կրելուց յետոյ, նորան, որ իր ապրուստի հնարներէց զըզլած է քնում, սպասում է միտէ ելք... այն է կրկին գիմել հարուստին, նորանից առաւել մեծ տոկոսներով դարձեալ մի գումար վախ ուզելու:

Այսպիսով փոքր արդիւնազէտը անդա

Եւրօպայի ժողովրդական ուսումնարանները հիմնվեցան քրիստոնէութեան մտնցվելու ժամանակ, ուրիմն պարտական են իրանց ծաղմամբ քրիստոնէութեանը: Արարօրս մեծը,

որը Գերմանիայի քանի մի երկիրներում, օրինակ Սաքսոնիայում, զորով մացրեց քրիստոնեությունը, կարող է մի և նոյն ժամանակ Գերմանիայի ժողովրդական ուսումնարանների հիմնող համարվել: Այդ ուսումնարանները ի հարկէ հիմնվել էին հոգևորականների ձեռքով, ուրեմն և ներթափանցան նոյա անմիջական ազդեցութեանը:

Միջին դարերում ոչ թէ միայն Գերմանիայում, բայց և Եւրոպայի ամեն երկիրներում ժողովրդական ուսումնարանները կառավարվում էին հոգևորականներից: Այն ժամանակ ուսումը այդ տեսակ ուսումնարաններում բոլորովին կրօնական էր, որովհետև մանկավարժութեան նոր դադարները դեռ ևս զարգացած չէին: Միջին դարերի Եւրոպայի հոգևորականութիւնը ուսումնարանները կառավարելով, ունէր տէրի առաջ միայն մի նպատակ. ուշադրութիւն չ'դարձնելով իւրաքանչիւր երեխայի մասնորէն դաստիարակութեանը, հակառակն, նաշուէր ուսում առնող երեխաների վերա, որպէս միակերպ, միանման էակների վերա, չ'զանազանելով նոյա անհատական յատկութիւնները, ուստի և միակերպ միջոցներ էր գործ դնում նոյա դաստիարակելու համար:

Հոգևորականութեան գաղափարն էր բոլոր երեխաների մէջ միակերպ հասկացողութիւններ և ուղղութիւն մտցնել, նոր սերունդի մասնորէն հոգևոր կեանքը միակերպացնել և ծառայեցնել նորան իր անձնական օգուտներին, գաղափարներին և նպատակներին:

Երբ բողոքականութիւնը Գերմանիայում երևաց, ուսումնարանները բաժանվեցան երկու տեսակ, որոնցից իւրաքանչիւրը իր ուղղութեանն էր հետևում. բողոքական և կաթոլիկ ուսումնարանները: Հրէաները իրանց համար առանձին ուսումնարանները ունէին Գերմանիայում: Այդ բոլոր ուսումնարանների մէջ սաստիկ երկպառակութիւն և թշնամութիւն կար:

Կաթոլիկ հոգևորականութիւնը, որը միշտ ձգտում էր միակերպացնել և իր ձեռքում կենդրոնացնել ժողովրդի հոգևոր կեանքը, որ ատում էր անհատութիւնը.— թշնամական աչքով էր նայում Գերմանիայի ուրիշ դաւանութիւններին պատկանող անկախ ուսումնարանների վերա, համարում էր նոյա հերետիկոսների հիմնարկութիւն:

Բայց կեանքը ընտանում էր և իր հետ էր բերում նոր մտքեր: Գիտութիւնը զարգանալով ծնեց մի նոր ճիւղ, — այն է մանկավարժութիւն: Նոր մանկավարժութիւնը հիմնվում է երեխայի ազատ զարգացման վերա: Նա աշխատում է երեխայի բնաւորութիւնը, նորա հակումները և ընդունակութիւնները ուսումնասիրել և դասաւանդութեան մասնորէն զարգացման միջոցները յարմարեցնել նորա անհատական ընդունակութիւններին:

Պրուսիայի տէրութիւնը, լուսավորեալ տէրութիւն լինելով հասկացել է և ըմբռնել է այդ մանկավարժական սկիզբը, բայց մի և նոյն ժամանակ հասկացել է և որքան օգուտներ, օգուտ քաղելով այդ գաղափարներից, իր ձեռքը դնել ժողովրդական ուսումնարանները: 1869—թուին, երբ Ալթերիս-ալթուական պատերազմից յետոյ, երեք տարւոյ խաղաղութիւնը Գերմանիայում թոյլ տուց Պրուսիային յաղթութիւնից յետոյ ստացած բարոյական նշանակութիւնը տարածել փոքր առ փոքր Գերմանիայի վերա, — իշխան Բիսմարկի հոգսերով սխալում է հարաւային Գերմանիայում շարժումը, որի նպատակն էր ընդլայնագործիւն անել հոգևորականութեան

ազդեցութեանը ուսումնարանի մէջ: Բոլոր հարաւային Գերմանիայի շարժման հետեանքը այն էր, որ փոքր առ փոքր առանձին դաւանութիւններին պատկանած ուսումնարանները վերցնվում էին և նոյա տեղ հիմնվում էին այնպէս անվանված խառն ուսումնարաններ, որտեղ ամեն դաւանութիւնների երեխաները պիտի միասին սովորէին:

Հասկանալի է, որ հոգևորականութիւնը ընդլայնագործում էր այդ նորութեանը:

Այդ շարժումը և հոգևորականութեան այդ կողմը զոյգութեան համար մինչև այժմ շարունակվում է: Հոգևորականութիւնը պաշտպանում է իր միջնադարեան իրաւունքները, և չէ կամենում իրենց իր ազդեցութիւնը.— տէրութիւնը ամեն իր քայլ անելիս ցոյց է աւելիս իրան, նոր առաջադէմ, մարդի անհատութեան վերա հիմնած միտքերի պաշտպան և աշխատում է թէ հեռացնել ուսումնարանից հոգևորականութիւնը թէ անմիջապէս հակադրութիւն ունենալ ժողովրդական ուսումնարանների վերա, որտեղ սովորում են ամեն դաւանութիւնների պատկանող երեխաները:

Այդպէս Գերմանիայի տէրութիւնը փոքր առ փոքր իր ձեռք է գցում ուսումնարաններին վերաբերեալ այն իրաւունքը, որ վաշելում էր հոգևորականութիւնը. — կ'զեղծանէ նա արեւօք այդ ստացած իրաւունքը իր կողմից մի և նոյն անելով, ինչ որ անում էր մինչև այժմ հոգևորականութիւնը. մի և նոյն պէս ուղղութիւն տալով նոր սերունդին, նորա մէջ մտցնելով այնպիսի հասկացողութիւնները, այնպիսի հայեացքները, սրտը օգտաւէտ են տէրութեան անձնական օգուտներին, և ծառայեցնելով նորան իր նպատակներին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Մի շուտ բնակիչ պարսն, ուղևորվելով դէպի Աստրախան, գրում է մի նամակ, որտեղ ցուցնելով թէ «Մշակը» այդքան քիչ բաժանորդ ունի Աստրախանում ստորագրվում է որպէս Աստրախանցի: Աստրախանցիք ի հարկէ կ'ընհատեն ուրիշ քաղաքի մի բնակիչ այդ քաղաքավարի վարմունքը: — Բայց մենք կարող ենք պ. Շուշեցուն մի միութարական տեղեկութիւն տալ.— այն է որ «Մշակը» ունի այժմ Աստրախանում ոչ թէ 2, այլ 4 բաժանորդ, որոնց թիւում պատկ. ունենք հաշիւ սրբ. Գեորգ արքեպիսկոպոս Վեհապետեանին:

Երևանից ստացած մի մասնաւոր նամակից քաղում ենք հետեանքը. «Այս տեղ Քոչո անունով մի գիժ կայ, որին բոլոր երևանցիք և վաղարապատեցիք ճանաչում են: Այս մարդը երկու շաբաթ առաջ Երևանում... եկեղեցի է մտնում մի երկուր, ժամերգութիւնից յետոյ իրան քաջաւած է պահում, ամէն մարդիկ գուրս են զալիս, եկեղեցու դռները փակվում են և Քոչոն, առանց յայտնուելու մէջ է մնում. Կէս դիւրուայ միջոցներ Քոչոն խորանի բարձր մոմերը վառում է ու սկսում է զանգեր տալ: փողովորդը հետաքրքրութեամբ եկեղեցին է վազում: — Հապի կարողացան Քոչոյի դուրս անել:

Կ. Պոլսի «Մարտի» լրագրի մի յօդվածից քաղում ենք յետադայ հետաքրքրի տեղեկութիւնը. «Մեր բացակայութեան ատեն Հաստինքն ու Հակահաստինքն հոս մեծ կռիւ ընկնին պատմեցին մի մեր բարեկամները, և արդէն լրագրաց մէջ ալ հրատարակու է անշուշտ, վասն զի պատմութեանց նայելով բաւական ծեծկուտը տեղի ունեցր է, և մինչև այսօր կառավարութեան կողմէն դիւրեւորը զարթիւններ կը հսկին եկեղեցին: Կը պատմեն թէ Հակահաստինքն եկեղեցին մտնել և պատարագ վերստին համար պղծուած սուրբակով վերէն վար նորէն օծումն ընդունել է Հաստինքնէն, մենք չենք ուղիւ ասոր հաւատալ, բայց կը հաւատացնեն»:

Ալաշ-բալաբից (Ալաշլիայի մօտ) հաղորդում են միւր, որ այդ քաղաքում կայ երկու հայ ուսումնարան. մինը օրիորդների, միւսը տղաների: Փետրվարի 14-ին կատարվեցաւ օրիորդների ու

սումնարանի տարեդարձի հանդէսը և փոքրիկ հարցաքննութիւն: Օրիորդները պատասխանում էին տարբ. հայերէն արտասանութեամբ և զբաղաւ լիզուն հասկանում են բաւական լաւ:

Գերմանական «Neue Freie Presse» լրագրը տպում է յետադայ պատմական անէկդոտը. Լուդուիգ XIV ֆրանսական թագաւորը իր ճանապարհորդութեան ժամանակ ընդունվում է մի դիւղի պաշտօնական անձերից. Գիւղի պետը մի երկար, ծանծրալի և անհամ ճառ է կարդում. ճառի մէջ տեղը լսվում է ակոտից էլի զոհնչը... «Պարոններ ասում է թագաւոր դասնալով դէպի այն կողմը որտեղից կենդանու ձայն է զալիս, յետոյ դէպի ճառախօսը.— պարոններ, խնդրեմ մինը միւսից յետոյ»:

Վերջին վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ Փարիզի մշակ աշխատաւոր դասի թիւը հասնում է մինչև 450,000, որոնցից մեծ մասը կազմում է դերձիկներ, — այն է 135,000, (նոյնից 31,000 էլ զուգարի գաղթականներ): Որոնաչէնների (կալաւոսների) թիւը 87,000: Հիւսնի (զուգարների) 22,000 են:

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ես, մի նկատողութիւն էի գրած պ. Մ. Ս., Մեր ընտանեկան կեանքի մասին՝ յօդվածի վերաբերութեամբ, որի երկու զլխաւոր մտքերը սրբա էին: Հնարցած ընտանեկը մեղաւոր է ի հարկէ որ օտար է մնում երիտասարդութեանը, բայց և երիտասարդութիւն էլ յանցաւոր է հասարակութեան առաջ, որ նա բաւականաճառ է մեղադրելով մեր ընտանեկը, իսկ ինքն ներթափանցում է նորա անշարժութեան և անտարբերութեան օրինակին: Միւս խնդիրը այն էր, որ չորրորդ և հինգերորդ դարի մեր արեւալ պապերը ոչ թէ իրանց ճառական ոճերով մտքերին քրիստոնէութիւնը, այլ նա (ինչպէս ամեն երկրում) զօրով մտցնելուց: Բայց սրբանից նա տարածվեցաւ ոչ թէ ճառական ոճերով, այլ բերանացի քարոզներով, որովհետեւ պ. Մ. Ս. հաւատացնում էր, որ հինգերորդ դարի հայ արեւալ պապերը ճառական ոճերով աւելի օգուտ են բերել քան թէ մենք մեր լակտիկական ոճով: Զբ. դիտեմ պ. Մ. Ս. ինչ է հասկանում ճառական ոճ բառով.— բայց ևս հասկանում էի և հասկանում եմ այդ բառով զրա կանոնութեան ճառական ոճերը: Հասկանալի է, որ ճառական ոճ բառը կարող է միայն գրվածքին վերաբերել, որովհետեւ պ. Մ. Ս. ինքն համեմատում է նորան մեր լակտիկական ոճի հետ, — իսկ այդ յայտնի է, որ մենք սովորութիւն չունենք բերանացի քարոզներ կարդալու, այլ գրելու պարագաներ ենք ընտրել միւր համար:

Այնպէս ժամանակներում չը կար միջոց իր զբ. վածները խիղճն տարածել ժողովի մէջ և շատ անգամ ժամանակակիցները բոլորովին տեղեկութիւն չունէին այս ինչ կամ այն ինչ դրօշի մասին. Գաղար փարպիցին անգամ տեղեկութիւն չունէր Մովսէս խորենացու գրվածքի գրութեան վերա: Գրողները փակված խոցերի մէջ էին գրում այն, ինչ որ նոյա հաւանելի էր, և ոչ թէ այն բանի վերա որ ժողովրդի պահանջին համապատասխան էր, և մեծ մասամբ իրենց ստեղծվածը նուիրում էին մի իշխանին, իսկա խնդրել կատարելու համար:

Բայց մենք այլ ևս պ. Մ. Ս. ի հետ իրաւունք չունենք խօսելու, որովհետեւ նորա տեղը «Մեղրու» վերջին համարում հանդէս դուրս եկաւ մի ուրիշ անձ, Ս. Ռ. Երկի նորա բարեկամ: Մենք չենք մեղադրում պ. Մ. Ս. ի քաղաքավարի վարմունքը իր բարեկամին պաշտպանելու, մենք ընդմէ չենք փոխադարձ օգնականութեան սկզբին մի խմբագրութիւն կազմող երկու գրողների մէջ, և ոչ էլ փոխադարձ օգնականութեանը երկու գրողան խմբագրութեանը մէջ, մենք թոյլ ենք տալիս միւր դաս տալ, ուրեմն և պատրաստ ենք դաս ընդունել.— բայց մի անյարմարութիւն ենք գտնում որ պ. Մ. Ս. պատասխանէ պ. Մ. Ս. ի համար, որովհետեւ կարող է պատահել այն, ինչ որ պատահել է: Պ. Ս. Ռ. չը հասկանալով, կամ ուշադրութեամբ կարդացած չը լինելով պ. Մ. Ս. ի գրվածք թողել է մեր պատասխանի զլխաւոր խնդիրը, ընտանեկը խնդիրը և սկսել է նկարագրել միւր պատմութիւնից այն երեւութները (օրինակ այն որ քրիստոնէութիւնը մարմնացաւ քարոզութիւններով և զարդանքի ալգեցութեամբ) որոնցից մեկը (քարոզը) մենք էլ հաւանցի կերպով միշտ ենք, ասելով թէ նորանով մի կողմից և զօրով միւս կողմից մտցնելուց: Քրիստոնէութիւնը և ոչ թէ ճառական ոճերով, այլ ինչ որ կը վերաբերի մարական,—մենք ուրախութեամբ խօստանում ենք պ. Մ. Ռ. ի ժամանակ

նակով մեկնել նորան, որքան օգտաւէտ կարող է լինել մի քանի դէպքերում մարական ազդեցութիւնը:

Երկրորդ ներքին 5% 1866 թուի փոխառութեան հանգած սերիաների տիրած (տիրած պօզաշէնիա) մարտի 1-ին 1872 թուին:

00,658	05,034	10,408	13,682
01,369	05,100	10,536	14,809
01,555	05,130	10,842	15,312
02,194	06,741	11,370	15,511
03,238	06,538	11,898	16,168
03,334	06,581	11,988	16,458
03,857	06,988	12,413	17,162
03,875	07,513	12,453	17,577
04,458	07,578	12,893	18,229
04,557	07,937	12,895	19,956
04,694	18,467	13,546	
04,916	19,527	13,623	

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ			
(ապրիլի 5-ին):			
ՈՍԿԻՆ, (պօլիտեխնիկա)	6	8	կողմ
ՓՈԽՆԱԿԱԿԱԳՐ (բարաթ) Պօլսում			
վճարելիք (լիւրա Օսմանեան)	6	80	»
ԲԱՄԲԱԿԱ Երևանում	5	30	»
» Ամերիկայի սերմից	6	50	»
ԲՈՒԹՐՈ Թուշու	2	4	»
» հասարակ թարաքեամի			»
ԲԱՄԲԱԿԱՆ Տրապիզոնի անջօք	14	50	»
» Սամսոնի № 1	27	50	»
» » № 2	20		»
» » № 3	14		»
ՇԱԲԱՐԸ Ռաի (Բրոցկու)	9	30	»
» » միւս տեսակը	9		»
» զաղարանից տրանցիդ (առանց մաքսի)	5	85	»
մաքսը վճարած	9		»
ՇԱԲԱՐԱԿԱՆ Ռաի	8	50	»
ՂԱՇՎԱ Լիւնի լաւ	13	50	»
» Մարտիկից, ցածր	11		»
» Մօլո, շատ լաւ	14	50	»
ՊԱՊԱՆԸ	11		»
ԿԼԵԿԸ	20	50	»
ՆՇԱԿԻ	10		»
ԵՐԿԱԹ	2	20	»
մինչև 3			
ՄԵՆ զաղարանից	5	20	»
ՄՕՄ	12		»

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ:

(մարտի 29-ին)
ԼՕՆԳՕՆ.—մի ուղղի ամէ 32¹/₂ պէնս (փոխանակ 40 պէնս):
ՓԱՐԻՋ.—մի ուղղի ամէ 346 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ):
ԲԱՄԲԱԿԱ Նիւ.—Օրէանի ամէ ֆունտը 11¹/₂ պէնս (մօտ 28 կողմ):
ԼԻՎԵՐՊՈՒԼ բարիկայի փաճառանոցը թոյլ է:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

АДВОКАТЪ
АЛЕКСАНДРЪ ЯКИМОВИЧЪ ШАХЪ-АЗИЗОВЪ КАМСАРАКАНЪ принимает на себя ежедневно публичную защиту по делам гражданскимъ и уголовнымъ; составляетъ апелляции, кассации и даетъ совѣты по судебнымъ дѣламъ.
Иногородные, желающие поручать ему дѣла, присылаютъ выписку изъ документовъ. О принятии или не принятии они получаютъ извѣщаніе съ первою почтою, или по телеграфу, на ихъ счетъ.
За веденіе гражданскихъ дѣлъ беретъ вознагражденіе на основаніи Высочайше утвержденной таксы, а за записку по дѣламъ уголовнымъ—по особымъ соглашеніямъ съ клиентами.
Условіе вознагражденіе за труды по веденію дѣлъ вѣрители уплачиваютъ ему по взаимному дѣлу.
Въ случаѣ проигрыша принятого имъ дела онъ принимаетъ на себя платежъ вѣрителю своему судебнымъ издержекъ.
Контора помещается возлѣ Армянскаго Ванскаго Собора, рядомъ съ Телеграфною Станціею, по Малой Водовозной улицѣ, въ собств. домѣ.